

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆԻՍ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևաքուղքը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաքուղքը: Պատասխանների ճևաքուղքի ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Թոփքի ժամանակ քոչունների ո՞ր մկաններն են իջեցնում թևերը.

- 1) միջկողային
- 2) փոքր ենթանրակային
- 3) ենթանրակային և միջկողային
- 4) կրծքային մեծ

2

Ո՞ր կենդանու սրտի փորոքից են դուրս գալիս թռքային զարկերակը և առտայի աջ ու ձախ աղեղները.

- 1) արագիլի
- 2) ճագարի
- 3) մողեսի
- 4) նշտարիկի

3

Մնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) սնկերը իրենց մարմնում կուտակում են զլյուկագոն ածխաջուրը
- 2) մուկորը խմորասունկ է
- 3) խմորասնկերը միաբջիջ են
- 4) դրոժը և պեճիցիլը բորբոսասնկեր են

4

Ո՞ր հիվանդության հարուցիչը չի պատկանում այրոկարիոտներին.

- 1) էնցեֆալիտի
- 2) ժանտախտի
- 3) բրուցելյոզի
- 4) անգինայի

5

Ո՞ր բույսի տերևներն են աղեղնաջիղ.

- 1) ազուրավաշքի
- 2) զարու
- 3) եղիպտացորենի
- 4) հովտաշուշանի

6 Քերանային ապարատի ո՞ր տիպն է քնորոշ փայտոջիլին.

- 1) լիզող
- 2) կրծող-ձծող
- 3) կրծող
- 4) ծակող-ձծող

7 Քանի՞ սրբանային ող ունի գորտը.

- 1) 8
- 2) 1
- 3) 2
- 4) 7

8 Ինչե՞րի առկայությամբ է պայմանավորված մարդու հումորալ իմունիտետը.

- 1) հակամարմինների
- 2) հորմոնների
- 3) ֆերմենտների
- 4) վիտամինների

9 Ի՞նչ է մարդու քոքամզային խոռոչը.

- 1) կրծքավանդակի և մերձպատային (առպատային) քոքամզային թաղանթի միջև ձևավորվող դատարկ տարածությունն է
- 2) քոքերի մակերևույթի և քոքային քոքամզային թաղանթի միջև ձևավորվող օղով լցված տարածությունն է, որը պատված է հարթ էպիթելիով
- 3) կրծքավանդակի ներքին խոռոչն է, որում գտնվում են բրոնխները, քոքերը, սիրտը
- 4) քոքային քոքամզային թաղանթի և մերձպատային (առպատային) քոքամզային թաղանթի միջև ձևավորվող տարածությունն է, որը լցված է քիչ քանակությամբ հեղուկով

10 Մարդու օրգանիզմում ի՞նչն է կազմված ծածկութային (էպիթելային) հյուսվածքից.

- 1) մազը
- 2) սրտապարկը
- 3) վեգը
- 4) վահանաճառը

11 Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում քրտնազեղձերը և ճարպազեղձերը.

- 1) բուն մաշկում
- 2) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 3) վերնամաշկում
- 4) ենթամաշկային բջանքում և էպիլերմիսում

12 Մարդու ողնուղեղի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) վերին սահմանը երկրորդ պարանոցային ողն է
- 2) գորշ նյութի լայնակի կտրվածքի վրա տարբերում են եղջյուրներ
- 3) գտնվում է ողնուղեղային խողովակում
- 4) ստորին սահմանը երրորդ սրբանային ողն է

13 Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին A - ի վերաբերյալ.

- 1) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում կարող են զարգանալ մաշկի կամ լորձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է
- 2) ջրալույծ է, ավիտամինոզի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 3) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինոզի դեպքում խթանվում է ոռղովասինի սինթեզը
- 4) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույծ է

14 Ի՞նչը չի մասնակցում մարդու լսողության իրականացմանը.

- 1) կորտոյան օրգանը
- 2) ձվածն (օվալածն) պատուհանի թաղանթը
- 3) արտաքին լսողական անցուղին
- 4) կիսաբոլոր խողովակը

15 Ի՞նչ հիվանդություն է առաջանում մարդու վահանաձև գեղձի գերգործառույթի հետևանքով.

- 1) բրոնզախտ
- 2) զաճաճություն
- 3) լորձայտուց
- 4) բազեղովյան

16

Որտե՞ղ են առաջանում կորիզակները.

- 1) հարթ էնդոպլազմային ցանցի բջջային թաղանթների վրա
- 2) բջջային կենտրոնում և գոլջիի ապարատի հարթ թաղանթների ցանցում
- 3) քրոմոսոմի n-ՌՆԹ-ի կառուցվածքը գաղտնազրող հատվածների շուրջը
- 4) կորիզաթաղանթի ներքին և արտաքին թաղանթներում

17

Ի՞նչն է կատարում մատրիցայի դեր սպիտակուցի կենսասինթեզի դեպքում.

- 1) ի-Ռ-ՆԹ-ի մոլեկուլը
- 2) Դ-ՆԹ-ի մոլեկուլը
- 3) ռիբոսոմը, կորիզը
- 4) Դ-ՆԹ-ի մոլեկուլի շղթաներից մեկը, փ-Ռ-ՆԹ-ն, ռ-Ռ-ՆԹ-ի մոլեկուլը

18

Ո՞րն է պոլիմեր.

- 1) մեթիոնինը
- 2) մանանը
- 3) էրիթրոզը
- 4) քսիլոզը

19

Ո՞ր դեպքում է ճիշտ նշված ԴՆԹ-ի կազմում գտնվող նուկլեոտիդներից մեկի կազմությունը.

- 1) թիմին - դեօքոսինիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 2) ադենին - ռիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 3) ուրացիլ - դեօքոսինիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 4) գուանին - ռիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ

20

Կորիզավոր բջջում որտե՞ղ է սինթեզվում ԱԵՖ-ը.

- 1) Գոլջիի ապարատում և բջջային կենտրոնում
- 2) միտոքոնիրիումում և քլորոպլաստում
- 3) բջջակորիզում
- 4) ռիբոսոմներում

21

Ի՞նչ գործառույթ է իրականացնում Գոլջիի ապարատը.

- 1) ԱԵՖ-ի և պոլիապտիդային շղթայի սինթեզ
- 2) ոիբոսոմների և ածխաջրերի սինթեզ
- 3) լիզոսոմների և պերօքսիզոմների առաջացում
- 4) լիպիդների և ոիբոսոմների ենթամիավորների առաջացում

22

Ո՞ր պնդումն է ճիշտ նշտարիկի երկշերտ սաղմի առաջացման վերաբերյալ.

- 1) սաղմնային սկավառակը ճեղքվում է երկու թերթիկի. արտաքին՝ էկտոդերմի և ներքին՝ էնտոդերմի
- 2) վեգետատիվ բևեռի բջիջները սողում են դեպի անիմալ բևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են էնտոդերմը
- 3) անիմալ բևեռի բջիջները սողում են դեպի վեգետատիվ բևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են երկշերտ սաղմը
- 4) երկշերտ սաղմն առաջանում է բլաստուլի պատի ներփքումով բլաստուլի խոռոչի մեջ

23

Ո՞ր կենդանիներին է բնորոշ հետսաղմնային անուղղակի զարգացումը.

- 1) գորտերին
- 2) սարդերին
- 3) սողուններին
- 4) տորուկներին

24

Ինչե՞րն են առաջանում սերմնարանների աճման գոտում.

- 1) առաջին կարգի սպերմատոցիտները
- 2) երկրորդ կարգի սպերմատոցիտները
- 3) սպերմատիդները
- 4) սպերմատոզոնիումները

25

Ո՞ր գեներն են կոչվում շղթայակցված.

- 1) հոմոլոգ քրոմոսոմների տարբեր գույգերում գտնվող գեները
- 2) մեկ բջջի առևտոսումների տարբեր գույգերում գտնվող գեները
- 3) սեռական քրոմոսոմների նույն լոկուսներում գտնվող գեները
- 4) մեկ քրոմոսոմում գտնվող գեները

26

Որքա՞ն կլինի հետերոզիզուտ օրգանիզմների տոկոսային բաժինը ըստ տվյալ հատկանիշի հետերոզիզուտ և հոմոզիզուտ առանձնյակների միահիքրիդ խաչատրման արդյունքում առաջացած սերնդում.

- 1) 0%
- 2) 100%
- 3) 50%
- 4) 25%

27

Գ. Մենդելի ճևակերպած ո՞ր օրենքն է պնդում, որ գամետների առաջացման ժամանակ դրանցից յուրաքանչյուրի մեջ ընկնում է ժառանգական գույզ գործոններից տվյալ հատկանիշին համապատասխանող միայն մեկ գործոն.

- 1) հատկանիշների անկախ բաշխման օրենքը
- 2) ճեղքավորման օրենքը
- 3) միակերպության օրենքը
- 4) գամետների մաքրության օրենքը

28

Ի՞նչ է ռեակցիայի նորման.

- 1) հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմանները
- 2) տվյալ գենի որոշակի հատվածի նուկլեոտիդների փոփոխության չափը
- 3) տարվա ընթացքում զերմաստիճանի փոփոխության սահմանները
- 4) հատկանիշի մուտացիոն փոփոխականության սահմանները

29

Մարդու ո՞ր հիվանդության պատճառն է առոտոսմներում գտնվող մուտանտ դրմինանտ գենը.

- 1) Քլայնֆելտերի սինդրոմի
- 2) ալրինիզմի
- 3) ֆենիլկետոնուրիայի
- 4) Մարֆանի սինդրոմի

30

Ինչի՞ հետ է կապված ցիտոպլազմային ժառանգականությունը.

- 1) բույսերի սոմատիկ և սեռական բջիջների ոիբոսմների և լիզոսմների ԴՆԹ-ի ժառանգման հետ
- 2) բույսերի սոմատիկ բջիջների կորիզային ԴՆԹ-ի ժառանգման հետ
- 3) կենդանիների սեռական բջիջների կորիզային ԴՆԹ-ի ժառանգման հետ
- 4) միտոքոնդրիումների և քլորոպլաստների ԴՆԹ-ի ժառանգման հետ

31

Ո՞ր օրգանիզմներին է բնորոշ սննդառության հետերոտրոֆ եղանակը.

- 1) ծծմբաբակտերիաներին
- 2) ամոնիֆիլկացնող բակտերիաներին
- 3) նիտրիֆիլկացնող բակտերիաներին
- 4) երկարաբակտերիաներին

32

Նշված էվոլյուցիոն փոփոխություններից ո՞րն է արոմոքող.

- 1) թրթուրների հովանավորող գունավորման առաջացումը
- 2) կենդանիների օրգանիզմում քորդայի առաջացումը
- 3) միջատների բերանային ապարատի ձևափոխությունները
- 4) մերձհատակյա կենսակերպ վարող ձկների մարմնի տափակությունը

33

Ո՞ր ճյութն է կենսածին.

- 1) հողը
- 2) օվկիանոսի ջուրը
- 3) քարածուխը
- 4) երկնաքարը

34

Ո՞ր շարքում նշված օրգաններն են հոմոլոգ.

- 1) պտերի և սնդրուկի կոճղարմատները
- 2) թռչունների և միջատների թևերը
- 3) խլուրդի և իշախառանչ արջուկի փորող վերջույթները
- 4) ձկների և խեցգետինների խոիկները

35

Նշված բույսերից ո՞րը մակարույժ չէ.

- 1) օմելան
- 2) ռաֆլեզիան
- 3) զաղձը
- 4) սարացենիան

36

Ի՞նչն է ընկած տեսակի գենետիկական շափանիշի հիմքում.

- 1) առանձնյակների ներքին և արտաքին կառուցվածքի նմանությունները
- 2) տեսակի գրաղեցրած արեալը
- 3) տեսակների կարիտաբերի տարրերությունները
- 4) սպիտակուցների և նուկլեինաքրուների կառուցվածքն ու կազմը

37

Սպիտակուցի մոլեկուլային զանգվածը 30120 գ.ա.մ. (զանգվածի ատոմական միավոր) է: Ամինաքրուների միջին մոլեկուլային զանգվածը 120 գ.ա.մ. է: Ինչքա՞ն ժամանակում (վրկ) բջջում կսինթեզվի տվյալ սպիտակուցը, եթե մեկ ամինաքրովի միացումը տևում է 0,2 վրկ:

- 1) 50
- 2) 50,2
- 3) 1250
- 4) 1255

38

Կնոջ սեռական գեղձերում 300 սկզբնական սեռական բջիջներ (օվոգոնիումներ) արդեմ տեղափոխվել են աճման գոտի: Որքա՞ն ձվաբջիջներ կարող են զարգանալ.

- 1) 900
- 2) 150
- 3) 300
- 4) 600

(39-40) Չափահաս մարդու մարմնի զանգվածը 80 կգ է, իսկ արյան խտությունը՝ 1,06 գ/մլ:

39

Սուտավորապես քանի^շ լիտր արյուն ունի այդ մարդը.

- 1) 5,28 - 6,04
- 2) 3,71 - 4,45
- 3) 3,3 - 3,96
- 4) 4,62 - 5,19

40

Հաշվել ձևավոր տարրերի զանգվածը (կգ).

- 1) 2,38 - 3,06
- 2) 2,24 - 2,88
- 3) 1,96 - 2,52
- 4) 2,8 - 3,52

41

Օրգանիզմի ո՞ր սեռին (նշված է ձախ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանիզմի սեռը

Բնութագիր

- A. ծղրիդի իգական սեռը
- B. պոչավոր երկենցաղի իգական սեռը
- C. մարդու իգական սեռը
- D. թիթեռի արական սեռը
- E. թռչունի իգական սեռը
- F. դրոզոֆիլ պտղաճանճի արական սեռը
- G. մողեսի արական սեռը

- 1. հետերոգամետ
- 2. հնմոգամետ

42

Քաժանման ո՞ր պրոցեսը (նշված է ձախ սյունակում) քջի քաժանման ո՞ր ձևին և փուլին (նշված են աջ սյունակում) է համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Քաժանման պրոցես

Քջի քաժանման ձև և փուլ

- A. սկսում է ձևավորվել քաժանման իլիկը, տեղի է ունենում հոմոլոզ քրոմոսոմների կոնյուգացիա և տրամախաչում
- B. ցենտրիոլները տարամիտվում են դեպի տարրեր քևեռներ, սկսում է ձևավորվել քաժանման իլիկը, հոմոլոզ քրոմոսոմներն առանձին-առանձին են
- C. հապլոիդ թվով երկրորմատիդային քրոմոսոմներն ապապարուրվում են
- D. տեղի է ունենում ցիտոպլազմայի քաժանում, ձևավորվում են դիպլոիդ քջիզներ
- E. հոմոլոզ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային գոտում՝ դեմ դիմաց
- F. տեղի է ունենում քրոմատիդների տարամիտում

- 1. մեյոզի երկրորդ քաժանման անաֆազ
- 2. մեյոզի առաջին քաժանման թելոֆազ
- 3. մեյոզի առաջին քաժանման պրոֆազ
- 4. միտոզի պրոֆազ
- 5. մեյոզի առաջին քաժանման մետաֆազ
- 6. միտոզի թելոֆազ

43

Գտնելով ուկրային ձկների գլխուղեղի բաժինների (նշված են աջ սյունակում) և նրանց բնորոշ առանձնահատկությունների, գործառույթների (նշված են ձախ սյունակում) համապատասխանությունը.

Առանձնահատկություն, գործառույթ

- A. կարգավորում է մարսողությունը
- B. դրւու են գալիս տեսողական նյարդերը
- C. դրւու են գալիս հոտառական նյարդերը
- D. դրւու են գալիս աչքը շարժող նյարդերը
- E. կարգավորում է շնչառությունը
- F. կարգավորում է արյան շրջանառությունը
- G. հավասարակշռության և շարժումների

Կարգավորման դեր է կատարում

Գլխուղեղի բաժին

- 1. երկարավուն ուղեղ
- 2. առջևի ուղեղ
- 3. միջակա ուղեղ
- 4. միջին ուղեղ
- 5. ուղեղիկ

44

Մարդու մկանների ո՞ր գործառույթները (նշված են ձախ սյունակում) ո՞ր մկաններին են (նշված են աջ սյունակում) համապատասխանում:
Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ

- A. կծկվելիս իջեցնում են (է) գլուխը
- B. մասնակցում են (է) ներշնչմանը
- C. մասնակցում են (է) գլխի աջ-ձախ թեքմանը
- D. մասնակցում են (է) արտաշնչմանը
- E. կծկվում են (է) թիակներն իրար մոտեցնելիս
- F. կծկվելիս բազուկն իջնում է և շարժվում հետ
- G. ձգում են (է) ազդրը դեպի հետ

Մկաններ

- 1. մեջքի լայն մկան
- 2. նստատեղի մկաններ
- 3. սեղանաձև մկան
- 4. արտաքին միջկողային մկաններ
- 5. կրծոսկրաանրակապտկաձև մկաններ
- 6. ներքին միջկողային մկաններ

45

Օրգանիզմների փոխարարերության ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) սիմբիոզի ո՞ր ձևին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում:
Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

- A. Երկու տեսակներից մեկը տուժում է, իսկ մյուսի համար փոխազդեցությունն անտարբեր է
- B. լոցման ձկները ստանում են սննդի մնացորդներ այն կենդանիներից, որոնց ուղեկցում են և միաժամանակ պաշտպանվում գիշատիչներից
- C. փոխազդող տեսակներից միայն մեկն է ստանում օգուտ, իսկ մյուսն այդ փոխազդեցության հանդեպ անտարբեր է
- D. խոշոր ծառերի և դրանց հովանու տակ աճող լուսաեր խոտարույսերի փոխազդեցությունը
- E. Էպիֆիտ բույսերն օգտագործում են ծառարույսերը որպես հենարան
- F. փոխազդեցությունը անհրաժեշտ պայման է երկու տեսակների համար, որի դեպքում երկուսն էլ օգուտ են ստանում
- G. փոխազդող տեսակները ստանում են օգուտ, սակայն դրանց համատեղ գոյությունը պարտադիր չէ
- H. խեցգետինը բնակվում է փափկամարմնի դատարկ խեցու մեջ և իր հետ տանում է ակտինիային

Սիմբիոզի ձև

- 1. ամենսալիզմ
- 2. կոմենսալիզմ
- 3. մուտուալիզմ
- 4. կոռպերացիա

46

Ինչպիսի՞ն է պրոցեսների ճիշտ հաջորդականությունը՝ ռեցեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց՝ ֆենոտիպում արտահայտվելը.

- 1. ռեցեսիվ մուտացիայի առաջացում
- 2. ըստ մուտանտ գենի՝ հոմոզիգոտ ձևի առաջացում
- 3. ռեցեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում
- 4. մուտացիայի արտահայտում ֆենոտիպում
- 5. ռեցեսիվ մուտացիայի տարածում
- 6. ռեցեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
- 7. նուկլեոտիդների մեկ զույգի փոխարինում

47

Ինչպիսի՞ն է կատարողակմի ընթացքում տեղի ունեցող պրոցեսների հաջորդականությունը.

1. պիրոխաղողաթթվի առաջացում
2. մարտողական վակուոլի առաջացում
3. միտոքոնորդիումում ԱԵՖ-ի առաջացում
4. բարդ օրգանական նյութերի ճեղքում
5. ֆագոցիտոզի միջոցով սննդային մասնիկի անցում բջիջ
6. պարզ շաքարի ճեղքում
7. սննդային մասնիկի միաձուլում լիզոսոմի հետ

48

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի նշված գործնթացների հաջորդականությունը.

1. ատոմային ջրածնի առաջացում
2. քլորոֆիլի մոլեկուլից էլեկտրոնի անջատում
3. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում
4. գլյուկոզի առաջացում
5. ջրի ֆոտոլիզ (քայլքայում)
6. գրգռված էլեկտրոնի անցում փոխադրիչ մոլեկուլի վրա
7. քլորոֆիլի մոլեկուլի վերականգնում

49

Նշել մարդու օրգանիզմում դեպի գլխուղեղի բջիջներ ճարպերի տեղափոխման հաջորդական ուղին՝ սկսած բարակ աղիներում ճարպերի քայլքայման գործնթացից.

1. քրքային զարկերակ
2. գլիցերինի և ճարպաթթուների ներծծում
3. գլխուղեղի զարկերակ
4. թափիկների էպիթելի բջիջներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ
5. առրտա
6. ստորին սիներակ
7. նեյրոններ
8. ավշային մազանոթներ
9. ձախ նախասիրտ

50

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում միջավայրի բարձր ջերմաստիճանի պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մաշկ մղվող արյան ծավալի ավելացում
2. արտաքին միջավայրի ջերմաստիճանի բարձրացում
3. քրտնարտադրության ուժեղացում
4. մաշկի արյունատար անորների լայնացում
5. ջերմատվության ուժեղացում
6. մաշկի ջերմային ընկալիչների դրդում
7. ջերմակարգավորման կենտրոնի դրդում

51

Նշել հ.Պ. Պավլովի փորձերում լույսի նկատմամբ թքազատության պայմանական ռեֆլեքսի առաջացման և իրականացման ճիշտ հաջորդականությունը.

1. լուսային ազդակի հետ զուգակցված կերակրում
2. թքազատություն
3. անտարբեր և ոչ պայմանական գրգռիչների զուգակցված ներգործության բազմակի կրկնություններ
4. թքազատության կենտրոնի դրդում
5. լուսային ազդակի ներգործություն
6. կեղևի սննդառական և տեսողական կենտրոնների միջև ժամանակավոր կապի առաջացում

52

Ի՞նչ հաջորդականությամբ են դասավորված մարդու մարսողական համակարգի բաժինները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. կույր աղի
2. ստամոքսի մարմին
3. վերելակ խթաղի
4. ստամոքսի հատակ
5. զստաղի
6. վայրիջակ խթաղի
7. տասներկումատնյա աղի
8. լայնակի խթաղի

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- հատիկավոր էնդոպլազմային ցանցով հարուստ են մարդու ենթաստամոքսային գեղձի, բբագեղձերի քջիջները
- ակտինը և միոզինը շարժողական սպիտակուցներ են, որոնք կազմավորում են մկանաթելիկներ և միմյանց հետ փոխազդելով, մեկը մյուսի նկատմամբ սահելով՝ ապահովում են մկանների կծկումը
- շրջակա միջավայրում նատրիումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի քջիջներում, իսկ կալիումի իոնների պարունակությունը կենդանի քջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
- գենետիկական գաղտնագիրն օժտված է ավելցուկայնությամբ, քանի որ նույլեռոտիդների մեկ եռյակը կարող է կոդավորել 1 - 6 ամինաթթուների
- կորիզավոր քջիջներում գլիկոլիզի արդյունքում առաջացած պիրոխաղողաթթուն քրվածնի բավարար քանակության պայմաններում անցնում է միտոքոնոդրիումներ և ենթարկվում հետագա ճեղքման, որի արդյունքում առաջանում է ացետիլ-կոֆերմենտ A
- բողբոջմամբ են բազմանում հիդրաները և բարձրակարգ բույսերը

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- էշերի, ձիերի անրակները լավ զարգացած են
- օղակավոր որդերը եռաշերտ, ճառագայթային համաչափությամբ օժտված կենդանիներ են
- լյարդի ծծանը փորային ծծանի միջոցով ամրանում է տիրոջ օրգաններին
- միջատների ճարպային մարմնիկում կուտակվում են արյունից առանձնացված վնասակար նյութերը
- բարենպատ պայմաններում կանաչ էվգլենան բազմանում է անսեռ եղանակով՝ կիսվելով մարմնի լայնությամբ
- բռչունների օղապարկերը մասնակցում են շնչառությանը, օրգանիզմից ջրի գոլորշիացմանը
- եքիդնան ճվադրող է, ունի ընկերք, չունի կոյանոց, ձագերին կերակրում է կաթով

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. ստորին ազատ վերջույթների կմախքը կազմված է կոնքոսկրերից, ազդրոսկրերից, ոլոքներից և ոտնաթաթի ուկորներից
2. վեգետատիվ նյարդային համակարգի նեյրոնների արտոնները միելինապատ են, և դրանցով նյարդային գրգիռը ավելի արագ է հաղորդվում, քան մարմնական նյարդաքելերով
3. պարասիմպաթիկ նյարդերով հաղորդվող նյարդային ազդակները հանգեցնում են սրտի պսակաձև անորների և ուղեղի անորների լայնացմանը
4. վարոլյան կամքում տեղակայված են ակնազնիների և դիմախաղի մկանների շարժումները, ինչպես նաև շնչառությունը կարգավորող կենտրոնները
5. աչքի և հոտառության ընկալիչներից նյարդային ազդակներն ուղարկվում են ողնուղեղ, ապա ուղեղաքնով հասնում տեսաթմքի համապատասխան կենտրոններ
6. էրիթրոցիտներն ունեն երկգոգավոր ներփառված սկավառակների տեսք, քայլքայվում են լյարդում և փայծաղում
7. արյան մակարդմանը նպաստում են կալցիումի իոնները, *K* վիտամինը, թրոմբինը

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. երկիետերոգիգոտ առանձնյակների խաչաերման արդյունքում, զույգ ալելների ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում ստացվում են 9 գենոտիպային և 4 ֆենոտիպային խմբեր
2. օրգանիզմի բոլոր հատկանիշների ամբողջությունը կոչվում է ֆենոտիպ
3. կողոմինանտության դեպքում հետերոգիգոտ առանձնյակներում դրսնորվող հատկանիշն ալելային զույգի երկու գեների գործունեության հետևանք է
4. պլեյոտրոպիայի դեպքում տարբեր ոչ ալելային գեներ պայմանավորում են միևնույն հատկանիշի գարգացումը
5. ասիմետրիկ տրանսլոկացիայի դեպքում երկու քրոմոսոմների ցենտրոմեր չպարունակող հատվածները միանում են միմյանց
6. ակվարիումային զուպափի ձկնիկի պոչալողակի զունավորումը *X* քրոմոսոմի հետ շղթայակցված հատկանիշ է

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. Խլուրդի և իշխառանչ արջուկի առջևի վերջույթների նմանությունը զուգահեռության օրինակ է
2. Միկրոէկոլոյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ
3. Կենսոլորտի սահմանները պայմանավորված են միջավայրի ոչ կենսածին գործոններով
4. Ի. Շմալհաուզենը ցույց է տվել, որ չփոփոխվող գոյության պայմաններում բնական ընտրությունը և էվոլյուցիան դադարում են
5. Մրցակցությունը, մուտուալիզմը, բնական ռադիոակտիվ ճառագայթումը եկոլոգիական կենսածին գործոններ են
6. արեգակնային ճառագայթման էներգիան, կենդանի նյութի կենսագործունեությունը կենսաբանական շրջապտույտի շարժիչ ուժերն են

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. Դոներակով լյարդի մեջ է մտնում աղեստամոքսային ուղուց դուրս եկող երակային արյունը
2. Արյան ճնշումը սիներակներում ավելի մեծ է, քան մազանոթներում
3. Վեղկավոր փականների եզրերից շարակցահյուսվածքային թելեր են ձգվում դեպի փորոքների պատերը
4. Հարականջային թքագեղձերը արտադրում են սպիտակուցային թուր
5. Ենթաստամոքսային գեղձի գլյուկազոն հորմոնն արյան գլյուկոզի հավելյալ քանակը դարձնում է գլիկոզեն
6. Ենթաստամոքսային գեղձի պոչային հատվածը շրջապատված է տասներկումատնյա աղիով, իսկ գլխիկը հարում է փայծաղին

(59-61) Ծանր ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու քոքերում արյան մեջ դիֆուզվել է 691,2 լ թթվածին: Ընդունել, որ աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,5 անգամ, օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն աճել է 20 %-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված արյան ծավալը՝ 1,4 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում, շնչառական օդի ծավալը 600 մլ է, սրտի բոլորաշրջանի տևողությունը՝ 0,8 վրկ և մեկ կծկման ժամանակ փորոքն արտամղում է 65 մլ արյուն:

59

Քանի՞ րոպե է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

60

Աշխատանքի ընթացքում քանի՞ լիտր թթվածին է ստացել զլխուղեղը: Ընդունել, որ զլխուղեղը ստանում է մեծ շրջան մղված արյան ծավալի 25 %-ը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

61

Որոշել մեկ օրվա ընթացքում սրտից արտամղված արյան ծավալը:

(62-63) Շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով, ուղիղ մազերով տղամարդն ամուսնացավ երկնագույն աչքերով, արյան երրորդ խմբով, ալիքաձև մազերով կնոջ հետ: Այդ ընտանիքում ծնվեց երկնագույն աչքերով, արյան առաջին խմբով, ուղիղ մազերով երեխա: Շագանակագույն աչքեր պայմանավորող գենն առտոսումային է և դոմինանտում է երկնագույն աչքեր պայմանավորող գենի նկատմամբ, ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունի գանգուր մազեր, մյուսը՝ ուղիղ: Նշված հատկանիշները պայմանավորող գենները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

62

Որոշել այդ ընտանիքում շագանակագույն աչքերով, արյան չորրորդ խմբով և ալիքաձև մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

Պատասխանը բազմապատկել 100-ով:

63

Զանի^o տեսակի գենոտիպով երեխաներ կարող են ծնվել տվյալ ընտանիքում:

64

Ֆուտոսինթեզի ժամանակ կլանվել է $10,08 \text{ m}^3 \text{ CO}_2$: Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (գրամ), եթե 1 մոլ գազը գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ:

(65-66) Օրգանիզմում գլյուկոզի մեղքման արդյունքում կուտակվել է 64 մոլ կաթնաթթու և պահեստավորվել է 52080 կԶ էներգիա: Ընդունել, որ 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաթթու մեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կԶ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ մեղքման արդյունքում անջատվում է 30 կԶ/մոլ էներգիա:

65

Որքանո՞վ է թթվածնային փուլում էներգիայի կորուստը գերազանցում անթթվածին փուլում մինչև կաթնաթթվի առաջացումը էներգիայի կորստին:

66

Քանի՞ մոլ ջուր է առաջացել ամբողջ պրոցեսի ընթացքում:

(67-68) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածի երկարությունը $1,53 \cdot 10^{-6}$ մետր է: Ա+Ծ / Գ+Ց քանակական հարաբերությունը հավասար է 1,5-ի, իսկ մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նանոմետր է:

67

Գտնել աղենինային և թիմինային նուկլեոտիդների գումարը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում:

68

Հաշվել ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում ԴՆԹ-ի երկու շղթաների ազոտային հիմքերի միջև առաջացող ջրածնային կապերի թիվը:

69

Ծածկասերմ բույսերի բեղմնավորման և սերմի զարգացման վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. միկրոսպորի մեյոզով կիսման արդյունքում առաջանում են հապլոիդ հավաքակազմով վեգետատիվ և գեներատիվ բջիջները
2. կրկնակի բեղմնավորման արդյունքում սաղմնապարկից ձևավորվում է սերմը
3. առէջի փոշեհատիկում մեյոզի արդյունքում առաջացող չորս հապլոիդ բջիջներից երեքը ոչնչանում են, իսկ մեկը վերածվում է մեգասպորի
4. փոշեհատիկն ընկնելով վարսանդի սպիրի վրա, ծլում է՝ առաջացնելով փոշեխողվակ
5. վարսանդի սերմնարանում մեգասպորը երեք մեյոտիկ բաժանումներից հետո սկիզբ է տախս ութ հապլոիդ կորիզներ պարունակող սաղմնապարկին
6. վեգետատիվ բջիջը կիսվում է միտոզով և առաջանում են երկու հապլոիդ հավաքակազմով սպերմիումներ

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Աեֆրոնի պատիճ մտնող առքերող զարկերակը ճյուղավորվում է մազանոքների, որոնք միանալով ձևավորում են արտատար զարկերակ
2. Կոնքուկրերի փոսիկներում տեղակայված երիկամներից աջը փոքր-ինչ ավելի վերև է, քան ձախը
3. Երկրորդային մեզը Աեֆրոնի պատիճի պատով ոլորուն խողովակի մեջ ֆիլտրվող հեղուկն է
4. Երիկամ են մտնում երկու խոշոր անոքներ՝ երիկամային զարկերակը և երիկամային երակը
5. Երկրորդային մեզը երիկամի միջուկային շերտի բուրգերի խողովակներով լցվում է երիկամի ավազան
6. Աեֆրոնի ոլորուն (գալարուն) խողովակն իջնելով միջուկային շերտ՝ վերածվում է ծնկաձև խողովակի, որն այնտեղ միանում է բրզով անցնող մեզը հավաքող խողովակին